*ՆԱԽԱԳԻԾ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

___ « __________ »2026թ. N __-Ն

ՈՐՈՇՈՒՄ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 483-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով.

*Երևան քաղաքի ավագանին որոշում է.*

1. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 483-Ն որոշման NN 1, 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1-5 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

**2026թ.** ________ « »

**Երևան**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 483-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով նախատեսվում է Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեում իրականացնել հետևյալ փոփոխությունները.

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2026 թվականի հուլիսի 16-ի N 1048-Ն, հուլիսի 23-ի N 1076-Ն և 1087-Ն որոշումները՝

- «Երևանի էներգաարդյունավետության» առաջին ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կողմից ԱԱՀ-ի մասով ֆինանսավորման նպատակով Երևան համայնքի 2026 թվականի բյուջեի եկամտային մասում ընթացիկ նպատակային հատկացումներն (սուբվենցիաների) ավելացնել 89,155.8 հազ. դրամով:

- Պետության կողմից Երևանի քաղաքապետին պատվիրակված լիազորությունների կատարման ընդհանուր բյուջեն ավելացնել 499,363.8 հազ. դրամով, որն արդեն ըստ պետական հատվածի ավելացման կամ կրճատման կարտացոլվի Երևան քաղաքի բյուջեի ծախսային մասում, մասնավորապես.

- «Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլ (պատվիրակված լիազորրույթուններ)» ծրագրից նվազեցնել՝ 89,155.8 հազ.դրամ:

- «Պետական աջակցությամբ իրականացվող ճանապարհների կառուցում և միջին նորոգում» ծրագիրն ավելացնել 588,519.6 հազ.դրամի չափով, որով կիրականացվեն Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Ոսկերիչների փողոցի 749 մետր երկարությամբ ճանապարհահատվածի համալիր հիմնանորոգման, ինչպես նաև «Մերիդիան» էքսպո կենտրոնի հարակից հատվածի համայնքային ենթակայության տակ գտնվող տարածքի ասֆալտապատման աշխատանքները:

2. Հիմք ընդունելով 2026 թվականի առաջին կիսամյակի փաստացի հավաքագրված եկամուտների վերլուծությունը՝ առաջարկվում է Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի եկամտային մասում՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար եկամտատեսակն ավելացնել՝ 2,000,000.0 հազ.դրամով,

ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ 198,000.0 հազ.դրամով, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ 72,000.0 հազ.դրամով, իսկ «Այլ տեղական վճարներ» եկամտատեսակն ավելացնել 2,672,000.0 հազ.դրամով, որից՝ նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) կազմելու կամ նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) փոփոխություն կատարելու համար՝ 2,000,000.0 հազ.դրամ, տրանսպորտային միջոցներով փոխադրումների միասնական ծառայություններից օգտվելու համար տեղական վճարը /փոխադրավարձ/՝ 515,000.0 հազ.դրամ, հասցեի տրամադրման համար՝ 107,000.0 հազ.դրամ, ավտոմատ ինքնասպասարկող սարքավորումների տեղադրման թույլտվության համար՝ 50,000.0 հազ.դրամ:

Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի ծախսային մասն առաջարկվում է բաշխել հետևյալ կերպ.

- «Կառավարման մարմնի պահպանում» ծրագրով ավելացնել 522,796.5 հազ. դրամ, որից՝ 475,696.5 հազ.դրամը կուղղվի կառավարման մարմնի բնականոն գործունեության ապահովմանը, իսկ 47,100.0 հազ.դրամը՝ համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի փոփոխության՝ ավագանու անդամի գործունեության համար փոխհատուցման նպատակով:

- «Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում» ծրագրին ավելացնել՝ 1,074,535.9 հազ. դրամ, որից՝ 808,810.1 հազ.դրամն ուղղել Երևան քաղաքում միջին նորոգումների իրականացմանը, մասնավորապես՝ Գարեգին Նժդեհի փողոց /Արշակունյանց պ. - Գ. Նժդեհի փ. խաչմերուկից մինչև Գ. Նժդեհի փ. Բագրատունյանց փ. օղակաձև հատում/՝ 18,262.1 հազ.դրամ, Տիգրան Մեծի փողոց / Տիգրան Մեծ փ. – Մ. Ադամյան փ. խաչմերուկից մինչև Տիգրան Մեծ փ. – Ս. Դավիթ փ. խաչմերուկ/՝ 299,668.4 հազ.դրամ, Ագաթանգեղոսի փողոց / Ագաթանգեղոս փ. – Արշակունյաց պ. Խաչմերուկից մինչև Ագաթանգեղոսի փողոցը Խանջյան փողոցին կապող թունելի սկիզբ (թունելի 2 թևերը ներառյալ)/՝ 429,912.4 հազ.դրամ, Արամ Խաչատրյան փողոց

/Հ. Հակոբյան փ. - Ա. Խաչատրյան փ. խաչմերուկից մինչև Վ. Փափազյան փ. - Ա. Խաչատրյան փ. խաչմերուկ և Ռիգայի փ. - Ա. Խաչատրյան փ. հատումից մինչև Մամիկոնյանց փ. - Ա. Խաչատրյան փ. խաչմերուկ/՝ 60,967.2 հազ.դրամ, իսկ 265,725.8 հազ.դրամն ուղղել՝ Էրեբունի, Կենտրոն, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Արաբկիր, Ավան վարչական շրջանների փողոցների, բակերի, բակային ճանապարհների և մայթերի ասֆալտ-բետոնյա ծածկի ընթացիկ նորոգումների իրականացմանը:

- «Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում» ծրագիրն առաջարկվում է ավելացնել 369,162.3 հազ. դրամ, որից 339,282.3 հազ.դրամը՝ Արին Բերդ փողոցի և Արցախի պողոտայի խաչմերուկը, Արին Բերդ փ. 5-րդ նրբանցքի խաչմերուկին միացնող ճանապարհահատվածի հիմնանորոգման աշխատանքների շարունակականությունն ապահովելու նպատակով, իսկ 29,880.0 հազ.դրամը՝ Աջափնյակ վարչական շրջանում սալիկապատման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

- «Արտաքին ձևավորում» ծրագրով՝ 100,000.0 հազ. դրամն ուղղել Երևան քաղաքի ամանորյա տոնական ձևավորման և մշակութային միջոցառումների կազմակերպման շրջանակներում նոր տեղադիրների թեմատիկ տոնական ձևավորման աշխատանքների կատարման համար լույսերի ձեռքբերմանը:

- «Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 232,115.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքում ընթացիկ խնդիրների լուծման, (վթարավերականգնողական) շինարարական աշխատանքների իրականացման, ինչպես նաև Աջափնյակ, Արաբկիր, Կենտրոն, Շենգավիթ, Ավան վարչական շրջաններում անկանխատեսելի խնդիրներին ուղղված աշխատանքների իրականացման նպատակով:

- «Աղբահանություն և սանիտարական մաքրում» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 223,552.8 հազ. դրամ, որից 43,558.8 հազ.դրամը՝ թվով 1 էքսկավատոր բեռնիչ մեքենայի ձեռքբերման, իսկ 179,994.0 հազ.դրամը՝ 2000 հատ աղբամանների /կոնտեյներների/ ձեռքբերման նպատակով:

- «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսերն առաջարկվում է ավելացնել 240,300.0 հազ. դրամով, մասնավորապես՝ աշխատողների աշխատավարձերի գծով՝ 80,000.0 հազ.դրամ, մեքենաների ընթացիկ նորոգման, 6 հատ ձնմաքրող կովշերի ձեռքբերման և թվով 52

նոր մեքենաների սպասարկման համար՝ 91,720.0 հազ. դրամ, իսկ ավազի և աղի ձեռքբերման համար՝ 68,580.0 հազ.դրամ:

- «Կանաչ տարածքների հիմնում և պահպանում» ծրագրով առաջարկվում է «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի պահպանման ծախսերն ավելացնել 280,200.9 հազ.դրամով՝ ոռոգման ջրագծի կառուցման աշխատանքներն իրականացնելու համար և թվով 5 խորքային հորերի կառուցման աշխատանքների համար՝ Ավան- Տաշքենդի 7/7 հասցեի հարակից ընտանիքի այգում, Քանաքեռ-Զեյթուն-Դրոյի փողոցին հարակից նորաստեղծ այգում, Նոր Նորք-Վերածննդի այգում, Նոր Նորք- Լվովյան փողոցի և Մյասնիկյան պողոտայի միջև նախատեսվող կանաչ գոտու 2 հատվածներում:

- «Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 44,760.0 հազ. դրամ, ընդհանուր օգտագործման կանաչ և ջրային տարածքներում (Հրազդանի կիրճ) աղբի, ըստ անհրաժեշտության եղեգների հավաքման և տեղափոխման ծառայությունների համար:

- «Բնապահպանական միջոցառումների իրականացում» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 300,000.0 հազ. դրամ, COP17 համաժողովի շրջանակում Երևանի՝ որպես հյուրընկալող քաղաքի պատշաճ ներգրավվածության ապահովման և շրջակա միջավայրի ու կենսաբազմազանության պահպանության միջազգային օրակարգին համահունչ քաղաքային միջոցառումների իրականացման նպատակով:

- «Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 363,092.9 հազ. դրամ, մասնավորապես՝ Երևան քաղաքի բակային տարածքներում ընթացիկ բարեկարգման աշխատանքների իրականացման նպատակով՝ 200,000.0 հազ.դրամ և Կենտրոն վարչական շրջանի Երվանդ Քոչար 21/1 և Զավարյան 1Ա բակային տարածքների հիմնանորոգման համար՝ 163,092.9 հազ.դրամ:

- «Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 50,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի Կիևյան փողոցի հարակից շենքերի լվացման աշխատանքների իրականացման նպատակով:

- «Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 65,000.0 հազ. դրամ, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան ՀՈԱԿ-ի ցուցադրությունների վերակազմակերպման, արդիականացման 2-

րդ փուլի իրականացման, ինչպես նաև առաջին հարկի մուտքային հատվածի նորոգման համար:

- «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 300,000.0 հազ. դրամ, Երևանի 2808 ամյակին նվիրված Էրեբունի-Երևան միջոցառման կազմակերպման նպատակով:

- «Կենդանաբանական այգու ցուցադրություններ» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 87,000.0 հազ. դրամ, որպես «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի պահպանման ծախս:

- «Արտադպրոցական կազմակերպությունների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 32,635.3 հազ. դրամ, «Ա. Ազարյանի անվան մարմնամարզության օլիմպիական հերթափոխի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի համար գույքի ձեռքբերման նպատակով:

- «Նախադպրոցական հաստատությունների կառուցում և վերանորոգում» ծրագրով՝ առաջարկվում է ավելացնել 656,848.4 հազ. դրամ, մասնավորապես՝ Ավան թաղամասում Ծարավ Աղբյուր փողոցում նոր մանկապարտեզի կառուցման աշխատանքների շարունակականության ապահովման նպատակով՝ 456,848.4 հազ.դրամ, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հ. 150 մսուր-մանկապարտեզի հիմնանորոգման և բակի բարեկարգման աշխատանքների համար՝ 150,000.0 հազ.դրամ, ինչպես նաև Երևան քաղաքի 12 վարչական շրջանների մանկապարտեզներում հրատապ լուծում պահանջող շինարարական աշխատանքների համար՝ 50,000.0 հազ.դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխությունները:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

Հավելված N 1
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի _______ __-ի
N ___-Ն որոշման

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 483-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝ | | **5,530,519.6** | **5,441,363.8** | **2,360,277.6** |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 + տող 1140 + տող 1150) այդ թվում՝ | 7100 | **2,000,000.0** | **2,000,000.0** | **-** |
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306+ տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310+ տող 11311 + տող 11312 + տող 11313 + տող 11314 + տող 11315 + տող 11316 + տող 11317 + տող 11318 + տող 11319) այդ թվում՝ | 7145 | **2,000,000.0** | **2,000,000.0** | **-** |
| 11301 | Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար | | 2,000,000.0 | 2,000,000.0 | |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260) այդ թվում՝ | 7300 | **89,155.8** | **-** | **89,155.8** |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262) այդ թվում՝ | 7332 | **89,155.8** | **-** | **89,155.8** |
| 1261 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | 89,155.8 | - | 89,155.8 |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390) այդ թվում՝ | 7400 | **3,441,363.8** | **3,441,363.8** | **2,271,121.8** |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342 + տող 1343) այդ թվում՝ | 7421 | **499,363.8** | **499,363.8** | **-** |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | 499,363.8 | 499,363.8 | - |
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352 + տող 1353) այդ թվում՝ | 7422 | **2,942,000.0** | **2,942,000.0** | **-** |
| 1351 | Տեղական վճարներ (տող 13501 + տող 13502 + տող 13503 + տող 13504 + տող 13505 + տող 13506 + տող 13507 + տող 13508 + տող 13509 + տող 13510 + տող 13511 + տող 13512 + տող 13513 + տող 13514 + տող 13515 + տող 13516 + տող 13517 + տող 13518 + տող 13519+ տող 13520) այդ թվում՝ | | **2,942,000.0** | **2,942,000.0** | **-** |

| Տողի NN | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 13502 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար | | 198,000.0 | 198,000.0 | - |
| 13503 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար | | 72,000.0 | 72,000.0 | - |
| 13520 | Այլ տեղական վճարներ | | 2,672,000.0 | 2,672,000.0 | - |
| **1390** | **3.9 Այլ եկամուտներ<br>(տող 1391 + տող 1392 + տող 1393)<br>այդ թվում՝** | **7451** | **-** | **-** | **2,271,121.8** |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | - | - | 2,271,121.8 |

Հավելված N 2
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի _______ __-ի
N ___-Ն որոշման

# ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 483-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազար դրամներով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | **5,530,519.6** | **5,441,363.8** | **2,360,277.6** |
| 2100 | **01** | **0** | **0** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **522,796.5** | **522,796.5** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2110 | **01** | **1** | **0** | ***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ*** | **522,796.5** | **522,796.5** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | 522,796.5 | 522,796.5 | - |
| 2400 | **04** | **0** | **0** | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | **2,364,332.8** | **1,027,084.6** | **1,337,248.2** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2410 | **04** | **1** | **0** | ***Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ*** | **-** | **(89,155.8)** | **89,155.8** |
| | | | | որից՝ | | | |
| 2411 | 04 | 1 | 1 | Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ | - | (89,155.8) | 89,155.8 |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | **2,032,217.8** | **884,125.4** | **1,148,092.4** |
| | | | | որից՝ | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | 2,032,217.8 | 884,125.4 | 1,148,092.4 |
| 2490 | **04** | **9** | **0** | ***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)*** | **332,115.0** | **232,115.0** | **100,000.0** |
| | | | | որից՝ | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | 332,115.0 | 232,115.0 | 100,000.0 |
| 2500 | **05** | **0** | **0** | **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | **1,088,813.7** | **865,260.9** | **223,552.8** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2510 | **05** | **1** | **0** | ***Աղբահանում*** | **463,852.8** | **240,300.0** | **223,552.8** |
| | | | | որից՝ | | | |
| 2511 | 05 | 1 | 1 | Աղբահանում | 463,852.8 | 240,300.0 | 223,552.8 |
| 2560 | **05** | **6** | **0** | ***Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)*** | **624,960.9** | **624,960.9** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | 624,960.9 | 624,960.9 | - |
| 2600 | **06** | **0** | **0** | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | **413,092.9** | **250,000.0** | **163,092.9** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2660 | **06** | **6** | **0** | ***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)*** | **413,092.9** | **250,000.0** | **163,092.9** |
| | | | | որից՝ | | | |
| 2661 | 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | 413,092.9 | 250,000.0 | 163,092.9 |
| 2800 | **08** | **0** | **0** | **ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ** | **452,000.0** | **452,000.0** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2820 | **08** | **2** | **0** | ***Մշակութային ծառայություններ*** | **452,000.0** | **452,000.0** | **-** |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| | | | | որից՝ | | | |
| 2821 | 08 | 2 | 2 | Թանգարաններ և ցուցասրահներ | 65,000.0 | 65,000.0 | - |
| 2824 | 08 | 2 | 4 | Այլ մշակութային կազմակերպություններ | 387,000.0 | 387,000.0 | - |
| 2900 | **09** | **0** | **0** | **ԿՐԹՈՒԹՅՈՒՆ** | **689,483.7** | **53,100.0** | **636,383.7** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 2950 | **09** | **5** | **0** | ***Ըստ մակարդակների չդասակարգվող կրթություն*** | **32,635.3** | **3,100.0** | **29,535.3** |
| | | | | որից՝ | | | |
| 2951 | 09 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 32,635.3 | 3,100.0 | 29,535.3 |
| 2960 | **09** | **6** | **0** | ***Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ*** | **656,848.4** | **50,000.0** | **606,848.4** |
| | | | | որից՝ | | | |
| 2961 | 09 | 6 | 1 | Կրթությանը տրամադրվող օժանդակ ծառայություններ | 656,848.4 | 50,000.0 | 606,848.4 |
| 3100 | **11** | **0** | **0** | **ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ** | **-** | **2,271,121.8** | **-** |
| | | | | այդ թվում՝ | | | |
| 3110 | **11** | **1** | **0** | ***ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ*** | **-** | **2,271,121.8** | **-** |
| | | | | որից՝ | | | |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | - | 2,271,121.8 | - |

**Հավելված N 3**
**Երևան քաղաքի ավագանու**
**2026 թվականի ______ __-ի**
**N ___-Ն որոշման**

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 483-Ն ՈՐՈՇՄԱՆ N 3 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **5,530,519.6** | **5,441,363.8** | **2,360,277.6** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4050 | **Ա. ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ[ա]** | x | **3,170,242.0** | **5,441,363.8** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4100 | **1.1 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ** | x | **555,696.5** | **555,696.5** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4110 | ***ԴՐԱՄՈՎ ՎՃԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ ԵՎ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ*** | x | 555,696.5 | 555,696.5 | - |
| | որից՝ | | | | |
| 4111 | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 555,696.5 | 555,696.5 | |
| 4200 | **1.2 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ** | x | **1,403,765.8** | **1,403,765.8** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4210 | ***ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ*** | x | 44,760.0 | 44,760.0 | - |
| | որից՝ | | | | |
| 4213 | -Կոմունալ ծառայություններ | 4213 | 44,760.0 | 44,760.0 | |
| 4230 | ***ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ*** | x | 650,000.0 | 650,000.0 | - |
| | որից՝ | | | | |
| 4238 | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 650,000.0 | 650,000.0 | |
| 4250 | ***ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՈՒՄ ԵՎ ՊԱՀՊԱՆՈՒՄ (ծառայություններ և նյութեր)*** | x | 637,325.8 | 637,325.8 | - |
| | որից՝ | | | | |
| 4251 | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 545,605.8 | 545,605.8 | - |
| 4252 | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 91,720.0 | 91,720.0 | - |
| 4260 | ***ՆՅՈՒԹԵՐ*** | x | 71,680.0 | 71,680.0 | - |
| | որից՝ | | | | |
| 4261 | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 14,700.0 | 14,700.0 | |
| 4264 | -Տրանսպորտային նյութեր | 4264 | (14,700.0) | (14,700.0) | - |
| 4268 | -Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 71,680.0 | 71,680.0 | |
| 4400 | **1.4 ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ** | x | **432,200.9** | **432,200.9** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4410 | ***ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ ՊԵՏԱԿԱՆ (ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ*** | x | 432,200.9 | 432,200.9 | - |
| | որից՝ | | | | |
| 4411 | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 432,200.9 | 432,200.9 | - |

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4600 | ***1.6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ*** | x | **47,100.0** | **47,100.0** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4630 | ***ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՄԲ ՆՊԱՍՏՆԵՐ (ԲՅՈՒՋԵԻՑ)*** | x | 47,100.0 | 47,100.0 | - |
| | որից՝ | | | | |
| 4634 | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 47,100.0 | 47,100.0 | - |
| 4700 | ***1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | **731,478.8** | **3,002,600.6** | **-** |
| | այդ թվում՝ | | | | |
| 4760 | ***ԱՅԼ ԾԱԽՍԵՐ*** | x | **731,478.8** | **731,478.8** | **-** |
| | որից՝ | | | | |
| 4761 | -Այլ ծախսեր | 4861 | 731,478.8 | 731,478.8 | - |
| 4770 | ***ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ*** | x | **-** | **2,271,121.8** | **-** |
| | որից՝ | | | | |
| 4771 | **-Պահուստային միջոցներ** | 4891 | - | 2,271,121.8 | - |
| 4772 | այդ թվում՝ համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային մաս կատարվող հատկացումներ | x | 2,271,121.8 | 2,271,121.8 | - |
| 5000 | **Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ** | x | **2,360,277.6** | **-** | **2,360,277.6** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5100 | **1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ** | x | **2,360,277.6** | **-** | **2,360,277.6** |
| | այդ թվում՝ | | | | |
| 5110 | ***ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*** | x | 2,007,189.5 | - | 2,007,189.5 |
| | որից՝ | | | | |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 456,848.4 | - | 456,848.4 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 1,550,341.1 | - | 1,550,341.1 |
| 5120 | ***ՄԵՔԵՆԱՆԵՐ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ*** | x | 332,988.1 | - | 332,988.1 |
| | որից՝ | | | | |
| 5121 | - Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 43,558.8 | - | 43,558.8 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 29,535.3 | - | 29,535.3 |
| 5123 | - Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 259,894.0 | - | 259,894.0 |
| 5130 | ***ԱՅԼ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ*** | x | 20,100.0 | - | 20,100.0 |
| | որից՝ | | | | |
| 5132 | - Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 20,100.0 | - | 20,100.0 |

**Հավելված N 4**
**Երևան քաղաքի ավագանու**
**2026 թվականի ______ __-ի**
**N ___-Ն որոշման**

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 483-Ն ՈՐՈՇՄԱՆ N 6 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*(հազար դրամներով)*

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում` (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | **ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ** | | **5,530,519.6** | **5,441,363.8** | **2,360,277.6** |
| 2100 | **01** | **0** | **0** | **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **522,796.5** | **522,796.5** | **-** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2110 | **01** | **1** | **0** | ***Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ*** | | **522,796.5** | **522,796.5** | **-** |
| | | | | որից` | | | | |
| 2111 | 01 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | | 522,796.5 | 522,796.5 | - |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***1. Կառավարման մարմնի պահպանում*** | | ***522,796.5*** | ***522,796.5*** | **-** |
| | | | | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 475,696.5 | 475,696.5 | - |
| | | | | -Այլ նպաստներ բյուջեից | 4729 | 47,100.0 | 47,100.0 | - |
| 2400 | **04** | **0** | **0** | **ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | **2,364,332.8** | **1,027,084.6** | **1,337,248.2** |
| | | | | այդ թվում` | | | | |
| 2410 | **04** | **1** | **0** | ***Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ*** | | **-** | **(89,155.8)** | **89,155.8** |
| | | | | որից` | | | | |
| 2411 | 04 | 1 | 1 | Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ | | - | (89,155.8) | 89,155.8 |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***1.Արևելյան Եվրոպայի Էներգախնայողության և բնապահպանական գործընկերության Ֆոնդի աջակցությամբ իրականացվող «Երևանի էներգաարդյունավետության» դրամաշնորհային ծրագիր*** | | ***89,155.8*** | **-** | ***89,155.8*** |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 89,155.8 | - | 89,155.8 |
| | | | | ***4. Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Երևանի էներգաարդյունավետության ծրագրի երկրորդ փուլ (մանկապարտեզների և այլ հանրային շենքերի էներգաարդյունավետության բարելավում) (պատվիրակված լիազորություններ)*** | | ***(89,155.8)*** | ***(89,155.8)*** | **-** |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | (89,155.8) | (89,155.8) | - |
| 2450 | **04** | **5** | **0** | ***Տրանսպորտ*** | | **2,032,217.8** | **884,125.4** | **1,148,092.4** |
| | | | | որից` | | | | |
| 2451 | 04 | 5 | 1 | Ճանապարհային տրանսպորտ | | 2,032,217.8 | 884,125.4 | 1,148,092.4 |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***1. Ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում*** | | ***1,074,535.9*** | ***265,725.8*** | ***808,810.1*** |
| | | | | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 265,725.8 | 265,725.8 | - |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 808,810.1 | - | 808,810.1 |
| | | | | ***8. Մայրուղիների և փողոցների վերակառուցում և հիմնանորոգում*** | | ***369,162.3*** | ***29,880.0*** | ***339,282.3*** |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում՝ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| | | | | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 29,880.0 | 29,880.0 | - |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 339,282.3 | - | 339,282.3 |
| | | | | ***19. Պետական աջակցությամբ իրականացվող ճանապարհների կառուցում և միջին նորոգում*** | | ***588,519.6*** | ***588,519.6*** | - |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | 588,519.6 | 588,519.6 | - |
| 2490 | **04** | **9** | **0** | ***Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող)*** | | **332,115.0** | **232,115.0** | **100,000.0** |
| | | | | որից՝ | | | | |
| 2491 | 04 | 9 | 1 | Տնտեսական հարաբերություններ (այլ դասերին չպատկանող) | | 332,115.0 | 232,115.0 | 100,000.0 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***6.Արտաքին ձևավորում*** | | ***100,000.0*** | - | ***100,000.0*** |
| | | | | –Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 100,000.0 | - | 100,000.0 |
| | | | | ***9. Հրատապ լուծում պահանջող ընթացիկ աշխատանքների իրականացում*** | | ***232,115.0*** | ***232,115.0*** | - |
| | | | | -Այլ ծախսեր | 4861 | 232,115.0 | 232,115.0 | - |
| 2500 | **05** | **0** | **0** | **ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ** | | **1,088,813.7** | **865,260.9** | **223,552.8** |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| 2510 | **05** | **1** | **0** | ***Աղբահանում*** | | **463,852.8** | **240,300.0** | **223,552.8** |
| | | | | որից՝ | | | | |
| 2511 | 05 | 1 | 1 | Աղբահանում | | 463,852.8 | 240,300.0 | 223,552.8 |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***1. Աղբահանություն և սանիտարական մաքրում*** | | ***223,552.8*** | - | ***223,552.8*** |
| | | | | -Տրանսպորտային սարքավորումներ | 5121 | 43,558.8 | - | 43,558.8 |
| | | | | –Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | 179,994.0 | - | 179,994.0 |
| | | | | ***3. «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի պահպանման ծախսեր*** | | ***240,300.0*** | ***240,300.0*** | - |
| | | | | -Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 4111 | 80,000.0 | 80,000.0 | - |
| | | | | -Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում | 4252 | 91,720.0 | 91,720.0 | - |
| | | | | -Գրասենյակային նյութեր և հագուստ | 4261 | 14,700.0 | 14,700.0 | - |
| | | | | -Տրանսպորտային նյութեր | 4264 | (14,700.0) | (14,700.0) | - |
| | | | | –Հատուկ նպատակային այլ նյութեր | 4269 | 68,580.0 | 68,580.0 | - |
| | | | | –Այլ մեքենաներ և սարքավորումներ | 5129 | (20,100.0) | - | (20,100.0) |
| | | | | –Ոչ նյութական հիմնական միջոցներ | 5132 | 20,100.0 | - | 20,100.0 |
| 2560 | **05** | **6** | **0** | ***Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)*** | | **624,960.9** | **624,960.9** | - |
| | | | | որից՝ | | | | |
| 2561 | 05 | 6 | 1 | Շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող) | | 624,960.9 | 624,960.9 | - |
| | | | | այդ թվում՝ | | | | |
| | | | | ***1. Կանաչ տարածքների հիմնում և պահպանում*** | | ***280,200.9*** | ***280,200.9*** | - |
| | | | | -Սուբսիդիաներ ոչ-ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 280,200.9 | 280,200.9 | - |
| | | | | ***4. Երևանյան լճի և Հրազդան գետի բնապահպանական պաշտպանում և մաքրում*** | | ***44,760.0*** | ***44,760.0*** | - |
| | | | | -Կոմունալ ծառայություններ | 4213 | 44,760.0 | 44,760.0 | - |
| | | | | ***9. Բնապահպանական միջոցառումների իրականացում*** | | ***300,000.0*** | ***300,000.0*** | - |
| | | | | -Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ | 4239 | 300,000.0 | 300,000.0 | - |
| 2600 | **06** | **0** | **0** | **ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ** | | **413,092.9** | **250,000.0** | **163,092.9** |
| | | | | այդ թվում՝ | | | | |

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Հոդված NN | Ընդամենը | այդ թվում` (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները փակագծերում) | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 2660 | **06** | **6** | **0** | ***Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող)*** | | **413,092.9** | **250,000.0** | **163,092.9** |
| | | | | որից` | | | | |
| 2661 | 06 | 6 | 1 | Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | 413,092.9 | 250,000.0 | 163,092.9 |
| | | | | այդ թվում` | | | | |
| | | | | ***3. Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում ու պահպանում*** | | ***363,092.9*** | ***200,000.0*** | ***163,092.9*** |
| | | | | -Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 200,000.0 | 200,000.0 | - |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 163,092.9 | - | 163,092.9 |
| | | | | ***4. Բազմաբնակարան շենքերի բարեկարգման այլ աշխատանքներ*** | | ***50,000.0*** | ***50,000.0*** | - |
